



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ

Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄ



Ուղեցույց դիտորդների,
վստահված անձանց և ՉԼՄ
ներկայացուցիչների համար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ

Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ

Ուղեցույց դիտորդների,
վստահված անձանց և ՉԼՄ
ներկայացուցիչների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՈՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ 04

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 07

ԻՆչ է տեխնիկական սարքավորումը: 07

Ինչպես է իրականացվում ընտրողների գրանցումը տեխնիկական
սարքավորման միջոցով: 07

ԻՆչ փաստաթղթերով կարող եմ քվեարկել: 07

Ինչու է ընտրողը մատնահետք հանձնում: 08

ԻՆչ է քվեարկության կտրոնը և իՆչ պետք է անեմ դրա հետ: 09

Արդյո՞ք ընտրողը պետք է հատուկ գիտելիքներ ունենա տեխնիկական
սարքավորման միջոցով գրանցվելու համար: 10

Ո՞վքեր են տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ: 10

ԻՆչ է նշանակում տեխնիկական սարքավորման Եկրանին
հայտնվող կանաչ նշանը: 11

ԻՆչ է նշանակում տեխնիկական սարքավորման Եկրանին
հայտնվող դեղին նշանը: 11

ԻՆչ է նշանակում տեխնիկական սարքավորման Եկրանին
հայտնվող կարմիր նշանը: 12

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 13

ԻՆչ է գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող
տեղեկանքը: 13

ԻՆչ է ավարտական տեղեկանքը: 13

Պաշտպանված են արդյո՞ք տեխնիկական սարքավորումները
ցանցահենային հարձակումներից: 14

Հնարավոր է արդյոք ստուգել կամ անկախ աուդիտի ենթարկել տեխնիկական սարքավորման վրա ներբեռնված ծրագրային ապահովումը:	14
Ինչպես են տեխնիկական սարքավորումները հասնում ընտրական տեղամասեր:	15
Ինչպես են ընտրողների տվյալները ներբեռնվում տեխնիկական սարքավորումներ մեջ:	15
Կարո՞ղ է արդյոք տեխնիկական սարքավորման մասնագետը փոփոխել ընտրողների ցուցակի տվյալները:	16
Կարո՞ղ է արդյոք տեխնիկական սարքավորման մասնագետը նոր ընտրող ավելացնել ընտրողների ցուցակում:	16
Ինչպե՞ս են քվեարկում զինծառայողները:	16
Ինչ է կատարվում ընտրողների մատնահետքերի ներմուծման անհնարինության դեպքում:	17
Կարո՞ղ է արդյոք ընտրողը նույն ընտրական տեղամասում գրանցվել մյուս տեխնիկական սարքավորման միջոցով կրկնակի քվեարկություն կատարելու համար:	18
Կարո՞ղ է արդյոք ընտրողն օգտագործել իր երկրորդ կամ երրորդ անձը հաստատող փաստաթուղթը կրկնակի քվեարկություն կատարելու համար:	18
Կարո՞ղ է ընտրողը քվեարկել երկու տարբեր ընտրական տեղամասերում:	18
Ինչ տեղի կունենա էլեկտրական հոսանքի անջատման դեպքում:	19
Ինչ կպատահի, եթե տեխնիկական սարքավորումը խափանվի:	19
Կօգտագործվե՞ն արդյոք տեխնիկական սարքավորումները հետագա ընտրությունների ժամանակ:	20
ՆՇՈՒՄՆԵՐ	21

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՈՎ



1. Քվեարկել կարող ես պատկերված փաստաթղթերից որևէ մեկով



2. Ներկայացրու անձը հաստատող փաստաթուղթը մասնագետին



5. Սարքավորման էկրանին կպատկերվի տվյալներդ



6. Մասնագետի հրահանգով ներմուծիր աջ ձեռքիդ ցուցամատի մասնահետքը

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱՅԼԵՐԸ



3. Մասնագետը ստուգում է բո ինքնությունը



4. Անձը հաստատող փաստաթուղթը ներմուծվում է սարքավորման մեջ



7. Սարքավորումը տպում է կտրոնը



8. Մասնագետը կտրոնը և անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում է ընտրողին

Ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորում

Ուղեցույց դիտորդների, վստահված անձանց և ՀԼՄ ներկայացուցիչների համար
Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.



ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է տեխնիկական սարքավորումը:

Տեխնիկական սարքավորումն օգտագործվելու է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների համաձայն՝ քվեարկության ընթացքում ընտրողների գրանցումն իրականացնելու համար: Առաջիկա խորհրդարանական ընտրություններին տեխնիկական սարքավորումները կներդրվեն բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում:

Ի՞նչպես է իրականացվում ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորման միջոցով:

Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետը ստուգում է ձեր ինքնությունը ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով (համեմատում է անձը հաստատող փաստաթղթի լուսանկարը քվեարկողի հետ), ներմուծում է ներկայացված փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ՝ օգտագործելով սարքավորման համապատասխան հատվածը: Տեխնիկական սարքավորումը կհաստատի ձեր տվյալները, որից հետո ձեզ կխնդրեն տեղադրել աջ ձեռքի ցուցամատը մատնահետքերի ընթերցման համար նախատեսված սկաների վրա: Մատնահետքի գրանցումից հետո, տեխնիկական սարքավորումը կտպի քվեարկության կտրոնը, որը պետք է պահել մինչև քվեարկության ավարտը:

Ի՞նչ փաստաթղթերով կարող եմ քվեարկել:

Քվեարկելու համար դուք կարող եք ներկայացնել ձեր նույնականացման քարտը, անձնագիրը, կենսաչափական անձնագիրը, ինչպես նաև անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող



Ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից: Եթե ձեր անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը լրացել է, դուք կարող եք մասնակցել քվեարկությանը, եթե չունեք այլ վավերական փաստաթուղթ : Դուք կարող եք մասնակցել քվեարկությանը անձնագրին կամ նույնականացման

քարտին փոխարինող ժամանակավոր փոխարինող փաստաթղթով՝ (9-րդ ձև)՝ տրված ՀՀ Ոստիկանության կողմից :

Ինչու է ընտրողը մատնահետք հանձնում:

Ընտրողը հանձնում է իր մատնահետքը, քանի որ քվեարկությանը մասնակցելու և տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվելու համար դա ՀՀ ընտրական օրենսգրքի սահմանված կարգն է, և ապացույց է քվեարկությանն անձամբ մասնակցած լինելու վերաբերյալ: Եթե լինեն բողոքներ խնդրահարույց գրանցման դեպքերի



հետ կապված, գրանցված մատնահետքերի տվյալների շտեմարանը թույլ կտա ճշտել գրանցման ստույգությունը, ինչպես նաև թույլ կտա համեմատել և ճշտել բնակչության բիոմետրիկ շտեմարանի հետ:

Ներկայումս բնակչության պետական ռեգիստրն ընդգրկում է բնակչության կենսաաչափական տվյալների շուրջ 30%-ը :

Մատնահետք հանձնելու քայլը պարտադիր է բոլոր ընտրողների համար, և դուք չեք կարող մասնակցել ընտրությանը, եթե հրաժարվում եք տրամադրել ձեր մատնահետքը:

Մատնահետքի գրանցումը կարող է չիրականացվել միայն երկու դեպքում՝

1. Երբ անհնար է մատնահետք տրամադրել ֆիզիկական արատի կամ վնասվածքի պատճառով:
2. Երբ տեխնիկական սարքավորումը չի կարողանում ընթերցել մատնահետքը:

Ի՞նչ է քվեարկության կտրոնը և ի՞նչ պետք է անեմ դրա հետ:

Քվեարկության կտրոնը տպվում է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացի վերջում և ընդգրկում է հետևյալ տեղեկությունները՝

- Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
- Ընտրական տեղամասի համարը:
- Քվեարկության կտրոնի տպման ժամը:
- Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը:
- Ընտրողի անունը, ազգանունը:
- Անձը հաստատող փաստաթղթի համարը:
- Ընտրողի լուսանկարը, եթե այն առկա է տվյալների շտեմարանում:
- Տեխնիկական սարքավորման համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ տեխնիկական սարքավորումում:



Տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվելուց հետո ընտրողը կտրոնը ներկայացնում ընտրողների գրանցման համար պատասխանատու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին: Ընտրողների ցուցակի համապատասխան տողում ընտրողի ստորագրելուց հետո հանձնաժողովի տվյալ անդամն իր անհատական կնիքն է դնում կտրոնի վրա:

Մի դրեք կտրոնը ծրարի մեջ և մի թողեք այն քվեախցիկում:
Քվեարկություն կատարելուց և քվեաթերթիկը ծրարում դնելուց հետո ընտրող պետք է մոտենա ինքնաստսնձվող դրոշմանիշ փակցնող և

քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և հանձնի նրան քվեարկության կտրոնը:

Դուք չեք կարող գցել ձեր քվեաթերթիկը քվեատուփի մեջ, եթե չեք հանձնել ձեր քվեարկության կտրոնը: Քվեարկության կտրոնը քվեարկության ընթացքում օգտագործվող այլ փաստաթղթերի հետ մեկտեղ ենթակա է հաշվառման և պահպանման տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:

Արդյո՞ք ընտրողը պետք է հատուկ գիտելիքներ ունենա տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվելու համար:

Ո՛չ: Ընտրողը հատուկ գիտելիքի կարիք չունի, որպեսզի գրանցվի տեխնիկական սարքավորման միջոցով: Տեխնիկական սարքավորումները սպասարկում են հատուկ մասնագետները, ովքեր կիրականացնեն տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացը: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն իրականացնում է ընտրողների համար նախատեսված հատուկ իրազեկման արշավ, որի միջոցով Հայաստանի բաղաբացիները կծանոթանան ընտրողների գրանցման նոր գործընթացի և տեխնիկական սարքավորման հետ: Ընտրողների ուսուցողական և դիդակտիկ նյութերին կարող եք ծանոթանալ ԿԸՀ պաշտոնական www.elections.am կայքում:



Ո՞վքեր են տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները:

Տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներն ընտրվել են ԿԸՀ կողմից բաց մրցույթով: Սահմանված ժամկետում թեկնածուները գրանցվել են ԿԸՀ կայքում, մասնակցել են

մասնագետների համար նախատեսված հատուկ դասընթացներին և հաջողությամբ անցել են որակավորման ստուգաթիվ:

Ազգային ժողովի 2017 թվականի ընտրությունների համար շուրջ 4000 մասնագետ կտեղաբաշխվեն կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովներում:

Ինչ է նշանակում տեխնիկական սարքավորման Էկրանին հայտնվող կանաչ նշանը:

Կանաչ նշանն ազդարարում է, որ ձեր անձը հաստատող փաստաթուղթը հաջողությամբ ներմուծվել է և ձեր տվյալներն առկա են տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում, և մատնահետք հանձնելուց հետո Ձեզ կտրվի քվեարկության կտրոն :




Ինչ է նշանակում տեխնիկական սարքավորման Էկրանին հայտնվող դեղին նշանը:

Դեղին նշանը ցույց է տալիս, որ ձեր անունը ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Եթե ձեր անունը ընդգրկված է այդ տարածքի մեկ այլ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, տեխնիկական սարքավորումը ցույց կտա այդ ընտրական տեղամասի տվյալները: Մասնագետը կհայտնի ձեզ տվյալ ընտրական տեղամասի տվյալները և կխնդրի հեռանալ տեղամասից:



Դեղին նշանը կհայտնվի նաև այն դեպքում, եթե դուք փորձեք քվեարկել անձը հաստատող ժամկետանց փաստաթղթով, մինչդեռ ունեք մեկ այլ վավերական փաստաթուղթ: Այս դեպքում քվեարկելու համար դուք պետք է ներկայացնեք ձեր անձը հաստատող վավերական փաստաթուղթը:

Ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորում
 Ուղեցույց դիտորդների, վստահված անձանց և ՉԼՄ ներկայացուցիչների համար
 Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.



Ինչ է նշանակում
 տեխնիկական
 սարքավորման Էկրանին
 հայտնվող կարմիր նշանը:

Կարմիր նշանը ցույց է տալիս, որ ձեր ներկայացրած անձը հաստատող փաստաթուղթը կամ ձեզ պատկանող անձը հաստատող փաստաթղթերից



որևիցե մեկն արդեն օգտագործվել է քվեարկություն կատարելու համար: Այս դեպքում, մասնագետը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վերջինս քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը:

Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը տպվում է Նախքան քվեարկության մեկնարկը՝ համոզվելու համար, որ գրանցված ընտրողների թիվը գրոյական է, և տեխնիկական սարքավորումը չի օգտագործվել Նախքան քվեարկությունը: Այս տեղեկանքը պետք է տպվի մինչ 08:00-ն:

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող տեղամասերում գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը տպվում է առկա բոլոր սարքավորումներով:

Ի՞նչ է ավարտական տեղեկանքը

Քվեարկության ավարտից և քվեատուփի կնքումից հետո մասնագետը պարտավոր է տպել ավարտական տեղեկանքը: Ավարտական տեղեկանքում ընդգրկվում է.

- Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
- Ընտրական տեղամասի համարը:
- Տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը:
- Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների թիվը:
- Քվեարկության օրը կազմվող ընտրողների

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
02/04/2017	
Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք	
Ընտրական տեղամաս:	20/02
Ընտրողների ցուցակում ընդգրկվածների թիվը	1578
Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թիվը	0
Տեղեկանքը տպվեց: 15:06:32	
Մարք VADI	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
02/04/2017	
ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ	
քվեարկության ընթացքում տեխնիկական սարքով գրանցված ընտրողների	
Ընտրական տեղամաս:	20/02
Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը	1450
Այդ թվում՝	
Ընտրողների ցուցակից	1250
Տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակից	10
Ցրաբաժնում հաշվառված ընտրողների ցուցակից	190
Ընտրողների ցուցակից գրանցվածների հեթոսական համարները	
1,2,9,65,87* 98	
* - Ընտրողներ, որոնց գրանցումն իրականացվել է անվճար հաստատող ֆառատաբլերի տվյալները տեխնիկական սարքավորման մեջ տեղեկատվությունը միջոցով:	
Տեղեկանքը տպվել է: 03/04/2017 15:06:32	
Մարք VADI	
Հանձնաժողովի նախագահ	
ստորագրություն	
Կ.Տ.	

լրացուցիչ ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների թիվը:

- Չորամասում հաշվառված ընտրողների ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը:
- Համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված այն ընտրողների հերթական համարները, ովքեր գրանցվել են տեխնիկական սարքավորման միջոցով:
- Տեղեկություն այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով մուտքագրվելու միջոցով:
- Տրման ամսաթիվն ու ժամը:
- Տեխնիկական սարքավորման համարը:

Պահանջի դեպքում մասնագետը տպում է ավարտական տեղեկանքի օրինակներ ամփոփման նիստին ներկա թեկնածուներին, վստահված անձանց և դիտորդներին տրամադրելու համար :

Պաշտպանված են արդյոք տեխնիկական սարքավորումները ցանցահենային հարձակումներից:

Տեխնիկական սարքավորումները միացված չեն ինտերնետին և, հետևաբար, պաշտպանված են արտաքին ցանցահենային հարձակումներից: Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորումները միմյանց հետ սինքրոնիզացվում են ցանցային լարերով՝ ռաուտերի միջոցով: Ռաուտերների անլար կապի հնարավորությունն անջատված է:

Հնարավոր է արդյոք ստուգել կամ անկախ աուդիտի ենթարկել տեխնիկական սարքավորման վրա ներբեռնված ծրագրային ապահովումը:

Այո, ծրագրային ապահովման ստուգումը հասանելի է Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին և

կուսակցությունների դաշինքներին: Վերջիններս կարող են մուտք գործել ծրագիր մուտքագրով մուտքգրով և գաղտնաբառով, որը թույլ կտա իրենց կողմից վստահված ծրագրավորող մասնագետներին ստուգել տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման համար օգտագործվող ծրագիրը:


Ինչպես են տեխնիկական սարքավորումները հասնում ընտրական տեղամասեր:

Քվեարկությունից մեկ օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստանում է տեխնիկական սարքավորումը (սարքավորումները), մյուս պարագաները տարածքային ընտրական հանձնաժողովից՝ քվեարկության համար նախատեսված այլ նյութերի հետ միասին:

Նույն օրը մասնագետը տեղադրում է տեխնիկական սարքավորումը (սարքավորումները) տեղամասային ընտրական հանձնաժողովում, ստուգում է տեխնիկական սարքավորման սարքին լինելը, ինչպես նաև տվյալ տեղամասի տվյալների ճշտությունը:

Ինչպես են ընտրողների տվյալները ներբեռնվում տեխնիկական սարքավորումներ մեջ:

Հանրապետության ընտրողների ցուցակը բաժանվում է 38 մասի, որը համապատասխանում է 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում կազմավորված ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակներին: Ընտրողների ցուցակները ներբեռնվում են USB կրիչների վրա: Տարածքային ընտրական



հանձնաժողովներում USB կրիչները տեղադրվում են տեխնիկական սարքավորման հատուկ մասում, որը փակվում և կնքվում է հերթական համար ունեցող հատուկ պլաստիկ կապարակնիքով:

Կապարակնիքների վրայի չկրկնվող համարները գրանցվում են:

Կարող ե արդյոք տեխնիկական սարքավորման մասնագետը փոփոխել ընտրողների ցուցակի տվյալները:

Ոչ, մասնագետը չի կարող փոփոխել ընտրողների ցուցակի տվյալները: Ընտրողների տվյալները պարունակող USB կրիչը անհասանելի է մասնագետին քվեարկության ընթացքում և USB կրիչի տվյալները կարող են կարդացվել միայն հատուկ ծրագրային ապահովման միջոցով:


Կարող ե արդյոք տեխնիկական սարքավորման մասնագետը նոր ընտրող ավելացնել ընտրողների ցուցակում:

Ոչ: Անգամ այն դեպքում, երբ ընտրողը ընդգրկվում է տեղամասում քվեարկության օրը կազմվող ընտրողների ցուցակում՝ ոստիկանության տրամադրած տեղեկանքի կամ դատարանի վճռի հիման վրա, մասնագետը մուտքագրում է տվյալ ընտրողի համարը, որը համապատասխանում քվեարկության օրը կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողի հերթական համարին: Կանաչ նշանի հայտնվելուց հետո ընտրողը հանձնում է իր մատնահետքը:

Ինչպե՞ս են քվեարկում զինծառայողները:

Զինծառայողը մոտենում է ընտրողների ցուցակի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին: Հանձնաժողովի անդամը ստուգում է զինծառայողի ինքնությունը, գտնում է վերջինիս անունը զորամասի ցուցակում, գրանցում է զինծառայողի անձը հաստատող զինվորական գրքույկի տվյալները ընտրողների ցուցակում, զինծառայողը ստորագրում է ցուցակում, որից հետո


հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը ստորագրության դիմաց: Հանձնաժողովի անդամը մասնագետին է հայտնում զինծառայողի հերթական համարը զորամասի ցուցակում, ով ստեղնաշարի միջոցով մուտքագրվում է տվյալ զինծառայողի համարը, որը համապատասխանում զորամասի ցուցակում ընտրողի հերթական համարին : Կանաչ նշանի հայտնվելուց հետո զինծառայողը հանձնում է իր մատնահետքը:



Մասնագետը կարող է իրականացնել զինծառայողների գրանցում միայն այն տեղամասերում, որտեղ ակտիվ է տեխնիկական սարքավորման վրայի «Զորամասի ցուցակ» կոճակը, այսինքն՝ միայն այն ընտրական տեղամասերում, որտեղ իրականացվելու է զորամասի ցուցակով քվեարկություն:

Ի՞նչ է կատարվում ընտրողների մատնահետքերի ներմուծման անհնարինության դեպքում:

Եթե ընտրողի աջ ձեռքի ցուցամատը բացակայում է կամ մատնահետքը չի ընթերցում տեխնիկական սարքավորման կողմից, ապա ընտրողը փորձում է ներմուծել իր ձախ ձեռքի ցուցամատը: Անհնարինության դեպքում փորձ է կատարվում ներմուծել Ընտրական օրենսգրքով սահմանված հերթականությամբ մեկ այլ մատնահետք: Եթե անհնարին է ներմուծել որևէ մատի մատնահետք, ապա այս դեպքերը գրանցվում են տեխնիկական սարքավորման կողմից:



Կարո՞ղ է արդյոք ընտրողը նույն ընտրական տեղամասում գրանցվել մյուս տեխնիկական սարքավորման միջոցով կրկնակի քվեարկություն կատարելու համար:

Մեկ ընտրական տեղամասում մեկից ավելի տեխնիկական սարքավորման առկայության դեպքում սարքավորումները աշխատում են ռաուտերի միջոցով: Ընտրական տեղամասում առկա մեկից ավելի տեխնիկական սարքավորումների միջև գործող սինքրոնիզացիան թույլ է տալիս վայրկյանների ընթացքում ստուգել արդյոք տվյալ անձն արդեն գրանցվել է իրեն պատկանող անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկով: Էկրանին հայտնվում է կարմիր նշան և լսվում է հատուկ ձայնային ազդանշան: Տեխնիկական սարքավորումը կտալի կրկնակի գրանցման փորձի տեղեկանք:

Կարո՞ղ է արդյոք ընտրողն օգտագործել իր երկրորդ կամ երրորդ անձը հաստատող փաստաթուղթը կրկնակի քվեարկություն կատարելու համար:

Ընտրողի անձը հաստատող բոլոր փաստաթղթերի տվյալները պահպանվում են մեկ միասնական տվյալների շտեմարանում: Անձը հաստատող մեկ այլ փաստաթղթով քվեարկության փորձ կատարելու դեպքում կրկին սարքավորման էկրանին կհայտնվի կարմիր նշանը, և կինչի հատուկ ձայնային ազդանշանը:

Կարո՞ղ է ընտրողը քվեարկել երկու տարբեր ընտրական տեղամասերում:

Ընտրողը ընդգրկված է միայն մեկ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեխնիկական սարքավորումը ակտիվացնում է միայն տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակը: Այս ցուցակը ԿԸՀ և ՀՀ Ոստիկանության կայքերում հրապարակված ցուցակների ճշգրիտ կրկնությունն է:

Ի՞նչ տեղի կունենա էլեկտրական հոսանքի անջատման դեպքում:



Զվեարկության օրն հոսանքի խափանման դեպքում անգամ մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացը կշարունակվի սովորական կարգով, քանի որ տեխնիկական սարքավորումը կշարունակի աշխատել ներքին մարտկոցի հաշվին: Ներքին մարտկոցը նախատեսված է մինչև 6 ժամ ինքնուրույն աշխատանքի համար: Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացը նույնպես կշարունակվի սովորական կարգով, քանի որ տեխնիկական սարքավորումները միացված են լինելու ռաուտերին, իսկ ռաուտերը միացված է լինելու UPS-ին, որը սնուցումը բավարար է մինչև 12 ժամ:

Ի՞նչ կպատահի, եթե տեխնիկական սարքավորումը խափանվի:

Յուրաքանչյուր տեխնիկական սարքավորում մինչև ընտրական տեղամաս տանելը ստուգվում է: Տեխնիկական սարքավորումները ստուգվում են նաև քվեարկությունից մեկ օր առաջ մասնագետների կողմից : Եթե ընտրատեղամասում բոլոր

000000 (նշվում է համարակազմած կտրոնի հերթական համարը)	
« _____ » նշվում է, թե որ ցուցակի ընտրող է ընտրողների ցուցակի անվանումը	
	նշվում է համապատասխան ցուցակում ընտրողի հերթական համարը
Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամի անհատական կնիք	

տեխնիկական սարքավորումները խափանվում են և ընտրողների էլեկտրոնային գրանցման գործընթացը հնարավոր չի լինում շարունակել, ապա ընտրողների գրանցումն իրականացվում է Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ համարակալված կտրոնների միջոցով:

Կօգտագործվէ՞ն արդյոք տեխնիկական սարքավորումները հետագա ընտրությունների ժամանակ:

Տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովումը թույլ է տալիս օգտագործել սարքավորումները հետագա ընտրություններում: Ծրագրային ապահովումը հետագայում կարող է նաև թարմացվել և հարմարեցվել օրենսդրությամբ սահմանված նոր պահանջներին:

Ուղեցույց դիտորդների, վստահված անձանց և ՉԼՄ ներկայացուցիչների համար
Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.

Ուղեցույց դիտորդների, վստահված անձանց և ՉԼՄ ներկայացուցիչների համար
Ազգային ժողովի ընտրություններ 2017թ.

Սույն հրապարակումը իրականացվել է
«Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» (ԱԸԳՀ) ծրագրի ֆինանսավորմամբ:

Սույն հրատարակությունում արտահայտված տեսակետների համար պատասխանատու են միայն հեղինակ(ները) և այն որևէ
ծևով չի արտահայտում ծրագրի ֆինանսավորող կողմերի՝ Եվրոպական միության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության
կամ ԱՄՆ կառավարության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ
Թագավորության, և ՄԱԶԾ-ի, որպես իրականացնող գործընկեր, տեսակետները:



EUROPEAN UNION



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



german
cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT



UK Conflict, Stability and Security Fund



UNDP
Empowered lives.
Resilient nations.

This publication was produced with funding from the *Support to the Electoral Process in Armenia (SEPA)* Project.

"The views expressed in the publication are the sole responsibility of the author(s) and can in no way be taken to reflect those of the parties financially supporting the project: the European Union, USAID or the United States Government, the Federal Republic of Germany, the United Kingdom of Great Britain and Northern Ireland, and the UNDP as implementing partner."